ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 դեկտեմբերի 2023 թվականի N 523 - Ա

« ՄԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՐՀԵՍՏՆԵՐՆ ՈՒ ՆԻՍՏՈՒԿԱՑԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումները՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:

2. Հաստատել՝

1) «Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) «Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.

3) «Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.

4) «Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.

5) «Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2023թ. դեկտեմբերի 22
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 22 -ի
N -Ա որոշման
523

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄ
«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառում

1. Հ.Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/

2. Ա.Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական

3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

5. Ս.Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

6. Ա.Սիմոնյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

7. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

8. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ. Թադևոսյան

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 22 -ի
N 913 -Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառում

Նկարագիր- Որպես միջոցառման անցկացման վայր կընտրվի Կապան համայնքի բնակավայրերից մեկը, որտեղ պահպանվել են թոնիրներն ու թոնրատան ավանդույթները: Թոնրատան բակում կհավաքվեն միոցառման մասնակիցները: Ազգային տարազ հագած աղջիկները միջոցառման ընթացքում կմատուցեն թոնրում թխված լավաշը: Թոնրատան տարածքը կձևավորվի մեր բնակավայրերին բնորոշ արհեստների ու նիստուկացի իրերով, թանգարանային նմուշներով: Կտեղադրվեն սեղաններ՝ ազգային ուտեստներով: Միջոցառման վարողը /ները/ մասնակիցներին կներկայացնի/են/ թոնրի պատրաստման արհեստի նրբություններն ու ավանդույթը, կավի հետ տարվող աշխատանքները, տարեմուտի հետ կապված ավանդական առանձնահատկությունները և մեր տարածքին բնորոշ սովորույթներն ու նիստուկացը: Միջոցառմանը կմասնակցեն նաև Արցախի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված ընտանիքների անդամներ, ովքեր ժամանակավոր կացարան են ստացել տվյալ բնակավայրում, նրանց կներկայացվի բնակավայրի նիստուկացին բնորոշ մշակույթը:

Միջոցառման ընթացքում կհնչեն ժողովրդական, ազգագրական երգեր ու պարեղանակներ: Կկազմակերպվեն ազգային խաղեր, կներկայացվեն Բարեկենդանին նվիրված ծիսակարգեր, կկատարվի մատաղի արարողություն:

Նպատակ- Միջոցառման թեման ընտրվել է թոնրի ու թոնրատան խորհուրդը, որպես մեր կենցաղին, սովորույթներին ու նիստուկացին բնորոշ մի բնագավառ: Միջոցառման նպատակն է երիտասարդներին ներկայացնել թոնրատանն ու հացի արարմանն առնչվող՝ մեր տարածաշրջանում պահպանված մի շարք արհեստներ ու ավանդույթներ, որոնցից շատերը նախաքրիստոնեական ժամանակներից են ստեղծվել ու սկզբնավորվել և ապացույց են այն իրողության, որ բնության ու մշակույթի կապն այստեղ միշտ էլ եղել է առաջնային: Երգերի ու աստմունքի կատարմամբ, ծիսական արարողությունների նկարագրերի ներկայացմամբ կմեծարվի մեր պապերի կողմից ստեղծված արհեստագործական մշակույթը, որն օգտագործվել է կենցաղում, գյուղատնտեսության մեջ և որի շնորհիվ արարվել են բերք ու բարիք: Միջոցառման գերնպատակն է՝ մեր բնակավայրերի մշակույթի ու բնության փոխառնչությունները՝ նոր և հետաքրքիր գիտելիքներով մասնակիցներին փոխանցելը, նրանց ամանորյա տոները հետաքրքիր ու բովանդակալից դարձնելը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ. Թադևոսյան

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 22 -ի
N 523 -Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» տարեվերջյան հանդիպումներ համայնքներում

Միջոցառման նպատակը.

Մշակութային միջոցառման հիմնական նպատակն է՝ երիտասարդներին ներկայացնել մեր տարածաշրջանում պահպանված մի շարք արհեստներ ու ավանդույթներ, որոնցից շատերը նախաքրիստոնեական ժամանակներից են ստեղծվել ու սկզբնավորվել և ապացույց են այն իրողության, որ բնության ու մշակույթի կապն այստեղ միշտ էլ եղել է առաջնային:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» մշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմը, կատարողը՝ մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» մշակութային միջոցառմանը մասնակցում են Լեռնային Ղարաբաղի տարբեր բնակավայրերից բռնի տեղահանված երաժշտական կրթօջախների սովորողներ, նկարիչներ, ասմունքողներ, հանրակրթական դպրոցի աշակերտներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումներն անց են կացվելու 2023թ. դեկտեմբեր ամսին, Կապան համայնքում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

Միջոցառումները կազմակերպվում են ըստ անցկացման ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը և անցկացման վայրը: Միջոցառումների ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմակերպական կոմիտեի կազմի հետ:

Միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերը /տրանսպորտ, սնունդ և ընթացիկ այլ ծախսեր/ հոգում է «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը:

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ. Թադևոսյան

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 22 -ի
N 523-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառում

	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Էներգետիկ ծախսեր	4212	17.0
2	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	95.0
3	Սարքերի և սարքավորումների վարձակալություն	4216	55.0
4	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267	96.0
5	Մասնագիտական ծառայություն	4241	169.0
6	Այլ ծախսեր	4861	48.0
7	ԱԱՀ		120.0
	Ընդամենը		600.0

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ. Թադևոսյան

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101

Հավելված N 5
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023թ. դեկտեմբերի 22-ի
N 523-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
«Մեր բնակավայրերին բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Միջոցառման անվանումը	Ժամանակը	Կատարման ամսաթիվը	Վայրը
1	1.1 «Մեր բնակավայրերի բնորոշ արհեստներն ու նիստուկացը» խորագրով մշակութային միջոցառում	9^{00}-14^{30}	դեկտեմբեր հունվար	ՀՀ Սյունիքի մարզ Կապան համայնք
	1.2 Միջոցառման մասնակիցների հավաք	9^{00}-9^{30}	դեկտեմբեր հունվար	ք. Կապան Գ. Նժդեհի հրապարակ
	1.3 Մեկնում Կապան համայնքի Դավիթբեկ բնակավայր	9^{30}-10^{00}	դեկտեմբեր հունվար	ք. Կապան Դավիթբեկ բնակավայր
	1.4 Միջոցառմանը նախապատրաստական աշխատանքներ /Թոնրատան տարածքի ձևավորում մեր բնակավայրերի արհեստներին ու նիստուկացին բնորոշ իրերով, թանգարանային նմուշներով/	10^{00}- 11^{00}	դեկտեմբեր հունվար	ք. Կապան Դավիթբեկ բնակավայր
	1.5 Միջոցառման մեկնարկ	11^{00}- 13^{00}	դեկտեմբեր հունվար	ք. Կապան Դավիթբեկ բնակավայր
	1.6 Միջոցառման ավարտ	16^{00}	դեկտեմբեր հունվար	

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարին փոխարինող՝ Գ. Թադևոսյան

Digitally signed by TADEVOSYAN GRIGOR 1909590101